

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Ի ՎԱՐՁՈՒԹԵՆԷ ՃԵՄԱՐԱՆԻ

1. Քննութիւնք ընդունելութեան յաշակերտութիւն ձեմարանի Մայր Աթոռոյս Սրբոյ Էջմիածնի կատարին մի անգամ և եթ ի տարւոջ և այն աւուրբք ինչ յառաջ քան զսկիզբն ուսումնական տարւոյ:

2. Ցանկացողք մտանել յաշակերտութիւն ձեմարանիս մատուցեն խնդիր յանուն Վեհափառ Վաթուղիկոսին ոչ անագան քան զմին յուլիս ամսոյ:

3. Ընդ խնդրագրին պարտէ առաջի առնել զվկայագիրս ուսման, բարի վարուց, ծննդեան և մկրտութեան և պատուաստման ծաղկի:

4. Նորեկ աշակերտք և ուսանողք զնին ի բժշկէ ձեմարանիս, որ և տայ Տեսչին զգրաւոր տեղեկութիւն զառողջութենէ նոցա:

5. Ի դպրոցական դասարանս ընկալեալ լինին առհասարակ ուսեալքն ի վարժարանս և կամ հրահանգեալքն առտնին կրթութեամբ, իսկ յառաջին յսարան ձեմարանիս՝ նորս միայն, որք ունին վկայագիր աւարտման դպրոցական դասընթացից:

6. Յետ կանոնաւոր հարցաքննութեան ընկալցին յաշակերտութիւն յամենայն դասարանս ձեմարանիս, իսկ վասն մտանելոյ յԱռաջին յսարան՝ ենթակեցին հարցաքննութեան յայն յամենայն աւարկայս, զորս կարեւոր համարիցի Աւսումնական Խորհուրդն:

Ծանօթութիւն. Վասն մտանելոյ յԳ. դասարանն պահանջի անմեղի գիտութիւն դասընթացից երկուսեւ, եկեղեցական ծիսական ուսումնարանաց, իսկ վասն մտանելոյ ի միւս դասարանս աշակերտք պարտին քննիլ ըստ ծրագրի հաստատելոյ ի Վեհափառ Վաթուղիկոսէն, ի պէտս լեւալն դպրոցաց:

7. Ցանկացողք մտանել յԱռաջին յսարան ձեմարանիս վկայագրով աւարտման դպրոցական դասընթացից, վերստին ունին ենթարկիլ հարցաքննութեան յամենայն աւարկայս, եթէ զիւր աւարտման անցեալ եղէ ի վերջ ուսուցել ասն զամ մի:

8. Յետ հարցաքննութեան ընկալեալ լիցին ի շարս աշակերտաց՝ որք արժանաւոր գատեցին Աւսումնական Խորհուրդն:

Ծանօթութիւն. Պահանջի՝ զի ընկալեալքն յաշակերտութիւն լիցին ուշիմք երկարողիք, ձայնեղք, բարեկազմք և բարեբարոյք:

9. Գ. դասարան ձեմարանին ընկալեալ լիցին պատանիք 14—16 ամեայ և ըստ այսմ՝ համեմատութեան ի յարորդ դասարանս:

10. Աշակերտք ձեմարանի գիշերօթիկք են ամենեքեան, ինչ ձրիափառքն և ինչ թոշակատուքն, որք ստանան զուսումն, սնունդ, հագուստ և զամենայն անողջապահական խնամս:

11. Թիւ ձրիափառից՝ որ ի հաշիւ Մայր Աթոռոյս, որոշի ամ ըստ ամէ ըստ բարեհաճ կարգադրութեան Վեհափառ Վաթուղիկոսի:

12. Աշակերտեալքն պարտին կանխաւ մատուցանել ի գրաւ՝ յայսկոյս կ. վրասեանք 50 ռուբլիս, իսկ եկեալքն յայլոց վիճակաց Ռուսաստանի կամ ի տարաքաղաքաց՝ ըստ իւր 75. որպէս զի հատուցի այդ ի ծախս վերադարձի նոցա ի հայրենիս ևս և ի գին կորուսեալ և վատնեալ գրենայ, հանդերձեղինաց և այլոց իրեղինաց:

13. Իւրաքանչիւր թոշակատու վճարեցէ ի տարին ըստ իւր 200, ի կրկին նուագս. ի Սեպտեմբեր և ի Յունուար ամիսս:

14. Եթէ իմ. շակատու ոք ելցէ կամ արձակիցի մինչև բոլորեալ ուսումնական կիսամակին, գրաւական նորա ոչ գարձուցի յետս:

15. Յամառնային արձակուրդս, եթէ ծնողք կամ բարերարք կամիցին տանել զորդիս իւրեանց ի հայրենիս, ծախք երթևեկութեանց նոցա լիցին ի ծնողաց կամ ի բարերարաց: